

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 11, ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 12, 13, 14-Ա-17-Ա, ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 18-Ա, ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 19-Ա, ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ ԹԻՎ 20-Ա-23-Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ ԹԻՎ 24-27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 11 որոշման վերնագրում նշվել է հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին, իսկ որոշման 1-ին կետով փոփոխվել է հողամասի նպատակային նշանակությունը:

Հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող ՀՀ համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով:

Բացի այդ, որոշման նախաբանում «հուլիսի 23-ի N 828-Ն» բառերից հետո գրառված «որոշմամբ հաստատված» բառերն անհրաժեշտ է փոխարինել «որոշման 1-ին կետով» բառերով:

Թիվ թիվ 14 և 15 որոշումների նախաբաններում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածին կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի: Անհրաժեշտ է հղում կատարել վերոգրյալ հոդվածի համապատասխան դրույթին:

Թիվ 14 որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 1 հավելվածի 3-րդ կետում և 4-րդ կետի 4-րդ ենթակետի գ, դ, զ, ը պարբերություններում համայնքային ծառայողների պաշտոնների անվանումներում «համայնքապետարանի» բառից հետո անհրաժեշտ է գրառել «աշխատակազմի» բառը, իսկ թ պարբերությունում անհրաժեշտ է նշում կատարել Ռուբեն Բադալյանի կողմից համաձայնություն տալու մասին:

Թիվ 15 որոշման նախաբանում «թիվ 1460» բառերից հետո գրառված «որոշումը» բառն անհրաժեշտ է փոխարինել «իրամանը» բառով, իսկ ՀՀ ԱԻ նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 1460 հրամանին կատարված հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին:

Բացի այդ, որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածները բացակայում են:

Թիվ 16 որոշման նախաբանում «N 1180-Ն որոշման» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «1-ին կետով հաստատված կարգի» բառերը: Որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշմանը կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

Բացի այդ, ՀՀ կառավարության վերը նշված որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետին և ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1532-Ն որոշմանը կատարված հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին:

Որոշման 2-րդ կետում «համապատասխան» բառն անհրաժեշտ է փոխարինել «համաձայն» բառով, իսկ «բնակավայրերում» բառից հետո անհրաժեշտ է գրառել «քաղաքացիական պաշտպանության» բառերը: Բացի այդ, նշված կետով հաստատվել է համայնքի բոլոր

բնակավայրերի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և անձնակազմի ցանկը, սակայն որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի վերնագրում գրառված է 9 բնակավայր: Հավելվածի վերնագրում «ցուցակ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ցանկ» բառով □ որոշման 2-րդ կետով հաստատվել է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և անձնակազմի ցանկը□:

Վերը նշված հավելվածի համարակալումը սխալ է և ՀՀ Շիրակի մարզպետարան առաքված է կիսատ: Բացի այդ, «գյուղ» բառը գրառված է կրճատ:

Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի բ□ և գ□ պարբերություններում «թվական» բառը գրառված է կրճատ: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ 17-Ա որոշման 2-րդ կետում «աշխատակազմի» բառից հետո գրառված «ղեկավար» բառն անհրաժեշտ է փոխարինել «քարտուղար» բառով:

Որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածները բացակայում են:

Թիվ թիվ 18-Ա և 23-Ա որոշումների նախաբաններում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշմանը կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի:

Թիվ 18-Ա որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման 2-րդ կետի պահանջին, համաձայն որի արտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար: Բացի այդ, որոշման համարակալումը սխալ է:

Թիվ թիվ 19-Ա, 20-Ա, 21-Ա, 22-Ա որոշումները չեն համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջին, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը: Վերը նշված որոշումներով համայնքի ղեկավարը համայնքային ենթակայության հողերն անհատույց □մշտական□ օգտագործման է տրամադրել՝ առանց համայնքի ավագանու համապատասխան որոշումների: Հետևաբար վերը նշված որոշումներն անհրաժեշտ է անվավեր ճանաչել □հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մաս□:

Բացի այդ որոշումներում նշված չեն, թե հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման ում են տրամադրվել:

Թիվ 23-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածում նշված չեն վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի հողատեսքերը և հողամասերի որակական հատկանիշները (հողի կարգը, ջրովի/անջրդի), իսկ հողամասերի վարձակալության վարձավճարի չափերը սահմանված են անորոշ ժամանակի համար:

Թիվ թիվ 11-13, 14-Ա-23-Ա որոշումները ՀՀ Շիրակի մարզպետարան են առաքվել □Տեղական ինքնակառավարման մասին□ ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Թիվ 11-27 որոշումներում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները: